**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2**
**ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/91 ծածկագրով**
**գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի**

Ք. Երևան «16» սեպտեմբեր 2024թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի **«23» օգոստոս 2024թ. թիվ 1574-Ա հրամանով** ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **«ՀՀ Լոռու մարզի Արքոյի գյուղի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների** ձեռքբերման նպատակով **ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/91** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Աշոտ Խաչատրյան՝ Հանձնաժողովի նախագահ
Խաչիկ Մարգարյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Արմինե Ղազարյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լիլիթ Պետրոսյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լուսինե Ղազարյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Վարդինե Իսահակյան՝ Հանձնաժողովի բացող անդամ
Արմինե Մակարյան՝ Հանձնաժողովի բացող անդամ

***1. Տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին***

1.1 Հայտերը բացվել են **2024 թվականի սեպտեմբերի 16-ին, ժամը 12:00-ին** էլեկտրոնային գնումների *Armeps (www.armeps.am)* համակարգի միջոցով, ք.Երևան, Կ.Ուլնեցի 31 , 2-րդ հարկ, 207 սենյակ հասցեում:

***2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները***

2.1 Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները

| ՀՀ | Մասնակիցների անվանումները | Հասցե, էլեկտրոնային փոստ, | հեռախոս |
|---|---|---|---|
| 1 | «ԱԼ ԵՎ ԱՐ» ՍՊԸ, «ԱՐԿԱԴԻԱ ՇԻՆ» ՍՊԸ, «ՑԵԼՍԻՈՒՍ» ՍՊԸ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ | ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն 20փ., 20/1, բն. 6<br>arsho_grigoryan@mail.ru<br>ՀՀ, ք. Երևան, Վ. Անտառային 136/1<br>kkasaryan@icloud.com<br>ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի փող. 5-րդ նրբ. 15/3<br>celsiusarmenia@mail.ru | +374 95532201<br>+374 98855558<br>+37443222220 |

***3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին***

3.1 Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակիցների կողմից հայտերը (ծրարը) կազմվել և ներկայացվել են էլեկտրոնային տարբերակով՝ Armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգով, և հրավերով սահմանված կարգով:

***4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին, տվյալներ՝ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների, գնման ընթացակարգը չկայացած***

***հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորման, տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին***

4.1 Հանձնաժողովը փաստում է, որ հայտերը՝ կից փաստաթղթերով, ներկայացվել են էլեկտրոնային տարբերակով՝ Armeps համակարգով և ենթակա են հետագա գնահատման:

***5. Տեղեկություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին՝ տառերով և թվերով արտահայտված***

5.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

***ՀՀ դրամ***

| Չ/Հ | Գնման Առարկան | Նախահաշվային պլանավորված Գինը | Մասնակցի անվանումը | Առաջարկված գինը առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Հայտի ապահովման առկայությունը (առկա է/ առկա չէ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **ՀՀ Լոռու մարզի Աքորի գյուղի միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքներ** | ***1 790 095 042*** | «ԱԼ ԵՎ ԱՐ» ՍՊԸ, «ԱՐԿԱԴԻԱ ՇԻՆ» ՍՊԸ, «ՑԵԼՍԻՈՒՍ» ՍՊԸ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ | 1 566 300 000 Մեկ միլիարդ հինգ հարյուր վաթսունվեց միլիոն երեք հարյուր հազար | 313 260 000 Երեք հարյուր տասներեք միլիոն երկու հարյուր վաթսուն հազար | 1 879 560 000 Մեկ միլիարդ ութ հարյուր յոթանասունինը միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար | Առկա է և համապատասխանում է հրավերի պահանջներին |

5.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացրած գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

***6.Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովն արձանագրեց, որ՝***

**6.1** «ԱԼ ԵՎ ԱՐ» ՍՊԸ, «ԱՐԿԱԴԻԱ ՇԻՆ» ՍՊԸ, «ՑԵԼՍԻՈՒՍ» ՍՊԸ կոնսորցիումի նախորդ հինգ տարիների (2019-2023թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ տվյալները ներկայացված են հրավերով սահմանված ձևով, կազմված և ստորագրված են մասնակիցների կողմից, ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023թ. հոկտեմբերի 26-ի N 1869-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ ստանալու իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը մասնակցի՝ նախորդ հինգ տարիների (2019-2023թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ:

**6.2** Համաձայն մրցույթի պահանջների՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտը ներառել է նաև հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի ձևով, և նշված հայտի ապահովումը Մասնակցի կողմից ներկայացվել է լուսապատճենված տարբերակով, ուստի Հանձնաժողովը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 67-րդ կետի պահանջներով, որոշեց ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ստուգելու ներկայացված հայտի ապահովման իսկությունը:

***7.Հանձնաժողովը որոշեց.***

7.1 Սույն արձանագրության 6-րդ բաժնի 6.1-րդ կետի հիմքով դիմել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե՝ «ԱԼ ԵՎ ԱՐ» ՍՊԸ, «ԱՐԿԱԴԻԱ ՇԻՆ» ՍՊԸ, «ՑԵԼՍԻՈՒՍ» ՍՊԸ կոնսորցիումի նախորդ հինգ տարիների (2019-2023թթ) համախառն եկամուտների հանրագումարի վերաբերյալ տվյալների իսկությունը ստուգելու նպատակով:

7.2 Սույն արձանագրության 6-րդ բաժնի 6.2-րդ կետի հիմքով դիմել երաշխավոր բանկերին՝ պարզելու Մասնակցի բանկային երաշխիքի իսկությունը:

***8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը***

8.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը կայանալու է 7-րդ կետում նշված փաստաթղթերը Հանձնաժողովին հանձնելուն հաջորդող 7-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին:

***Հանձնաժողովի նիստը***

***նախագահող՝***

Աշոտ Խաչատրյան ____________

անդամներ՝

Խաչիկ Մարգարյան ____________

Արմինե Ղազարյան ____________

Լիլիթ Պետրոսյան ____________

Լուսինե Ղազարյան ____________

Վարդինե Իսահակյան ____________

Արմինե Մակարյան ____________

քարտուղար՝

Մարի Մովսիսյան ____________

**ПРОТОКОЛ №2**
**заседания по вскрытию заявок на процедуру закупки**
**под кодом HTZH-DBM-AShDzB-2024/91**

г. Ереван «16» августа 2024 г.
время: 12:00

Оценочная комиссия (далее – «Комиссия»), созданная приказом № 1574-А исполнительного директора Армянского фонда территориального развития (адрес: ул. К. Улнеци 31, РА, г. Ереван, ИНН 0084644, эл.почта: atdf@atdf.am) от 23 августа 2024 года, с целью приобретения работ на **«Строительство средней школы в селе Акори в области Лори РА»** по коду **HTZH-DBM-AShDzB-2024/91**, участвует в заседании по вскрытию заявок (далее- «Заседание») в следующем составе:

**Ашот Хачатрян,** председатель заседания комиссии
**Хачик Маргарян,** член оценочной комиссии
**Армине Казарян,** член оценочной комиссии
**Лилит Петросян,** член оценочной комиссии
**Лусине Казарян,** член оценочной комиссии
**Вардине Исаакян,** член комиссии
**Армине Макарян,** член комиссии

***1. Информация о месте, дне и времени вскрытия предложений.***

Тендерные заявки были вскрыты 16 августа 2024 года в 12:00 часов через систему «Armeps» по адресу: г. Ереван, ул. К. Улнеца 31, 2 этаж, каб. 207.

***2. Имена и адреса участников, подавших заявки.***

Следующие участники подали заявки в электронном виде с использованием системы «Armeps»:

| н/д | Имя участника | Адрес | Тел. |
|---|---|---|---|
| 1 | ООО АР-АР, ООО АРКАДИА ШИН, ООО ЦЕЛСИУС Консорциум | РА, гр. Ереван, ул. Нубарашена 20, 20/1, кв. 6<br>arsho_grigoryan@mail.ru<br>РА, гр. Ереван, В. Лесная 136/1<br>kkasaryan@icloud.com<br>РА, гр. Ереван, ул. Арин-Берди. 5-й переулок 15/3<br>celsiusarmenia@mail.ru | +374 95532201<br>+374 98855558<br>+37443222220 |

***3. Данные об оформлении и подаче заявок (эл.конвертов) в соответствии с требованиями приглашения.***

Комиссия зафиксировала, что заявки (эл.конверты) были оформлены и поданы участниками в электронном виде посредством системы «Armeps» и в соответствии с требованиями Приглашения.

***4. Информация о цене, предлагаемой каждым участником, выраженная буквами и цифрами.***

Количество лотов: **1**

| ***н/д*** | ***Ориентировочная запланированная цена*** | ***Имя участника*** | ***Предлагаемая цена без НДС /Арм.драм/*** | ***НДС /Арм.драм/*** | ***Общая стоимость /Арм.драм/*** | ***Наличие обеспечения тендерной заявки (Да/Нет)*** |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1 790 095 042 | ООО АР-АР, ООО АРКАДИА ШИН, ООО ЦЕЛСИУС Консорциум | 1 566 300 000 Один миллиард пятьсот шестьдесят шесть миллионов триста тысяч | 313 260 000 Триста тринадцать миллионов двести шестьдесят тысяч | 1 879 560 000 Один миллиард восемьсот семьдесят девять миллионов пятьсот шестьдесят тысяч | Да |

***5. Сведения о наличии в каждом вскрытом эл.конверте документов, предусмотренных приглашением, и о том, что они оформлены в соответствии с условиями, установленными приглашением, данные об участниках, отобранных и не признанных таковыми; в случае объявления процедуры закупок несостоявшейся - его обоснование, информация о запросах относительно заявок и ответах.***

В комиссии отмечают, что заявки с приложенными документами были поданы в электронном виде посредством системы **"Armeps"** и подлежат дальнейшей оценке.

***6. На основании изложенного комиссия установила, что***

6.1 данные о совокупном валовом доходе ООО АР-АР, ООО АРКАДИА ШИН, ООО ЦЕЛСИУС Консорциум за предыдущие пять лет (2019-2023гг.) представляются по форме, указанной в приглашении, составленном и подписанном лицом, уполномоченным действовать от имени участников. В связи с этим, руководствуясь абзацем "б" подпункта 1 пункта 1 решения, утвержденного Постановлением Правительства РА № 1869-Н от 26 октября 2023 года и 67-м пунктом Порядка «Об организации процесса закупок» (далее-«Порядок»), утвержденного Постановлением Правительства РА № 526-Н от 4 мая 2017 года, необходимо принять меры для получения письменного заключения компетентных органов о совокупном валовом доходе резидент участников за предыдущие пять лет (2019-2023гг.).

6.2 Согласно требованиями тендера в представленные Участниками заявки также входило «Обеспечение заявки» в виде банковской гарантии, причем указанные гарантии были представлены Участниками в фотокопированном варианте, следовательно, необходимо принять соответствующие меры по проверке подлинности выданной гарантии, Поэтому комиссия, руководствуясь требованиями пункта 67 Порядка, утвержденного подпунктом 1 пункта 1 решения правительства Республики Армения от 04 мая 2017 года N 526-Н, решила принять соответствующие меры для проверки подлинности выдачи представленной гарантии:

***7.Комиссия решила:***

7.1 На основании пункта 6.1 раздела 6 настоящего протокола обратиться в Комитет государственных доходов Республики Армения с целью проверки достоверности данных о совокупном валовом доходе ООО АР-АР, ООО АРКАДИА ШИН, ООО ЦЕЛСИУС Консорциум за предыдущие пять лет (2019-2023 гг.).

7.2 Обратиться в Банк-гарант на основании пункта 6.2 раздела 6 настоящего протокола для выяснения подлинности банковской гарантии, выданные участниками.

***8: Место, дата и время проведения следующего заседания комиссии:***

Следующее заседание комиссии состоится на **седьмой день**, следующий за передачей комиссии документов, указанных в пункте 7, в **11:00-го** часов.

***Председатель Комиссии:***

Ашот Хачатрян ____________

**Члены Комиссии:**

Хачик Маргарян ____________

Армине Казарян ____________

Лилит Петросян ____________

Лусине Казарян ____________

Вардине Исаакян ____________

Армине Макарян ____________

Мари Мовсисян ____________